ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

5 հունիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

71
(3280)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՓՈԽՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Էկոնոմիկայի նախարարությունը շրջանառության մեջ է դրել կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է մեղմել այն ֆինանսական բեռը, որը վերջին շաբաթներին ռուսական շուկայի սահմանափակումների հետեւանքով ծանրացել է հայկական ջերմատնային տնտեսությունների վրա: Խոսքը վերաբերում է կառավարության 2023 թվականի N 1284-Լ որոշմամբ հաստատված՝ ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրին: Նախագծի հիմնավորումից պարզ է դառնում, որ իշխանությունները փաստացի ընդունում են՝ «Ռոսսելխոզնադզորի» սահմանափակումները լուրջ հարված են հասցրել Հայաստանի գյուղատնտեսական արտահանողներին:

Հիշեցնենք, որ մայիսի 22-ից «Ռոսսելխոզնադզորը» սահմանափակեց հայկական ծաղիկների ներմուծումը Ռուսաստան, հունիսի 2-ից սահմանափակումներ մտցրեց կենդանի ձկան եւ ձկնամթերքի արտահանման նկատմամբ, մայիսի 30-ից արգելեց Հայաստանից թարմ լոլիկի, վարունգի, պղպեղի, կանաչեղենի եւ ելակի ներմուծումը: Ռուսական կողմը հայտարարեց, որ միայն 2026 թվականին հայկական բուսաբանական արտադրանքում արձանագրվել է 181 խախտում, հայտնաբերվել են կարանտինային օրգանիզմներ, իսկ Հայաստանի կողմից արտահանվող ապրանքների հետագծելիության համակարգը, ըստ ռուսական գերատեսչության, փաստացի չի գործում: Բացի այդ, մի շարք հայկական ընկերություններ, ըստ ռուսական կողմի, նույնիսկ հրաժարվել են ստուգումներից:

Այս ֆոնին ուշագրավ է, որ կառավարությունն այժմ ոչ թե փորձում է վերացնել խնդիրների պատճառները, այլ արտահանողների համար լրացուցիչ վարկային արտոնություններ է նախատեսում:

*Մանրամասները՝ ArmLur.am կայքում*



Բազմաթիվ անձանց նյութապես շահագրգռելուն օժանդակելու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման համար 37 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Այս մասին տեղեկացնում են Քննչական կոմիտեից: ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 37 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Ա.Ա.-ին օժանդակելու՝ 2025-2026 թվականներին հավաքներին մասնակցելու նպատակով բազմաթիվ քաղաքացիներին նյութապես շահագրգռելուն, ինչպես նաեւ Ա.Ա.-ի հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում կատարելու համար: Այս պահի դրությամբ ձերբակալվել է 25 անձ, որոնց վերաբերյալ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններ են ներկայացվում դատարան: Մյուս մեղադրյալների վերաբերյալ կայացվել են ձերբակալման որոշումներ: Նախաքննության փուլում կատարված 50-ից ավելի խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ անձանց գումարներ բաժանելու, արտերկրում բնակվող՝ ՀՀ քաղաքացիություն եւ ընտրելու իրավունք ունեցող անձանց կոնտակտային տվյալների վերաբերյալ ցուցակներ, քաղաքացիների հավաքագրումների, կոնկրետ անձանց՝ կատարված «բարեգործությունների» վերաբերյալ հաշվետվություն տալու մասին փաստաթղթեր: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:



Ռուսաստանը պատրաստ է իր տարածքում հարթակ տրամադրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման համար: Այս մասին Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովում հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը. «Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ պատրաստ ենք աջակցել Բաքվին եւ Երեւանին տրանսպորտային եւ տնտեսական հաղորդակցությունների ապաշրջափակման, հումանիտար հարցերի լուծման գործում, ինչպես նաեւ պատրաստել եւ տրամադրել ռուսական հարթակ խաղաղության պայմանագրի ստորագրման համար»: Ռուս պաշտոնյան նշել է, որ Մոսկվան հետեւողականորեն աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների լիարժեք կարգավորմանն ուղղված ջանքերին՝ հիմնված 2020-2022 թվականներին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ ձեռք բերված եռակողմ պայմանավորվածությունների վրա: Գալուզինը նաեւ անդրադարձել է «3+3» տարածաշրջանային համագործակցության ձեւաչափին, որի կազմում են Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան, Ադրբեջանը, Հայաստանը եւ Վրաստանը: Նրա խոսքով՝ Մոսկվան մեծ ներուժ է տեսնում այս հարթակում, քանի որ այն միավորում է Հարավային Կովկասի երկրներն ու նրանց պատմական հարեւաններին: «Այս մեխանիզմը կոչված է նպաստելու տարածաշրջանի խնդիրների լուծմանը հենց տարածաշրջանի երկրների եւ նրանց հարեւանների ուժերով՝ առանց արտաքին ապակառուցողական միջամտության»,- ընդգծել է ՌԴ ԱԳ փոխնախարարը:



ԱՄՆ վարչակազմը աշխատում է Ռուսաստանի դեմ նոր պատժամիջոցների վերաբերյալ օրինագծի վրա: Այս մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն: Նրա խոսքով՝ Սպիտակ տան իրավախորհրդատուների վարչությունը միջգերատեսչական մակարդակով համագործակցում է սենատոր Լինդսի Գրեհեմի գրասենյակի հետ՝ օրինագծի մանրամասների մշակման շուրջ՝ներկայացնելով այն դրույթները, որոնք ընդունելի կլինեն վարչակազմի համար: «Նախագահը նշել է այդ նախաձեռնությունը եւ տվել է իր համաձայնությունը»,- ասել է Ռուբիոն: Նրա խոսքով՝ներկայում շարունակվում է օրինագծի վերջնական ձեւակերպումների համաձայնեցումը: Միաժամանակ Վաշինգտոնը մտադիր է պահպանել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցային ճնշման քաղաքականությունը՝ չնայած ռուսական նավթի վաճառքի հետ կապված որոշ ժամանակավոր արտոնություններին: Սենատոր Գրեհեմի գնահատմամբ՝նախաձեռնությունը վայելում է «իսկայական երկկուսակցական աջակցություն» եւ Սենատում մոտ է ընդունմանը: ԱՄՆ-ը մայիսի կեսերին երկրորդ անգամ երկարաձգել է ռուսական նավթի վաճառքի հետ կապված որոշ գործարքների թույլտվությունները: Նմանատիպ արտոնություն տրամադրվել էր նաեւ ապրիլին, իսկ առաջին անգամ՝ մարտին:

⇨ էջ 3

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ Է ԺՈՂՈՎՈՒՐԴԸ»

**Armur.am-ը զրուցել է «Հայաժվե» ազգային - ժողովրդավարական միավորման անդամ Արեգ Սավգուլյանի հետ:**

-Պարոն Սավգուլյան, «Ուժեղ Հայաստան» դաշինքը անցկացրեց իր քարոզարշավի ամփոփիչ հանրահավաքը: Որքանո՞վ եք հետեւել քարոզարշավին, ի՞նչ տպավորություններ ունեք, եւ ինչպե՞ս է ժողովուրդն ընդունում «Ուժեղ Հայաստանը»:

- Հայ ազգային քաղաքացիական միավորումը ակտիվ մասնակցություն է ունեցել «Ուժեղ Հայաստան» դաշինքի քարոզարշավին: Այս ընթացքում նորաստեղծ քաղաքական ուժը կարողացել է ներկայանալ հանրությանը եւ կազմակերպել բավականին լայնածավալ քարոզարշավ: Հատկանշական է, որ ընդդիմադիր ուժերից քչերն են կարողացել Հանրապետության հրապարակում անցկացնել նման մասշտաբի ամփոփիչ հանրահավաք:



**- Ձեր կարծիքով՝ այս բազմամարդ հավաքն ինչի՞ մասին է վկայում:**

- Այն վկայում է, որ քաղաքացիները ցանկանում են ապրել իրենց հայրենիքում, ունենալ անվտանգ եւ կայուն պետություն: Մեր կողմից ամիսներ շարունակ ինչեցված ուղերձները հասել են մարդկանց, եւ նրանք իրենց մասնակցությամբ ցույց են տալիս այդ ակնկալիքները:

**- Քարոզարշավի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեն հրապարակեց մի շարք գաղտնալսումներ, որոնց թիրախում հիմնականում կազմակերպիչներն ու նախընտրական շտաբների պատասխանատուներն էին: Սա, ըստ Ձեզ, ի՞նչ նպատակ է հետապնդում:**

- Իրավապահ մարմինները պետք է վերջնական իրավական գնահատական տան այդ նյութերին: Սակայն պետք է հաշվի առնել, որ կան բազմաթիվ հանգամանքներ, որոնք դեռեւս պարզաբանման կարիք ունեն: Որոշ դեպքերում խոսքը վերաբերում է ընտրական շտաբներում օրինական ձեւակերպված աշխատակիցներին, սակայն իշխանությունները հաճախ ընտրում են ճնշումների ճանապարհը՝ ավելի խստացնելով վերահսկողությունը:

**- Եթե իսկապես լինեն ընտրակաշառքի կամ այլ խախտումների դեպքեր, ինչպե՞ս կարձագանքի «Ուժեղ Հայաստանը»:**

- Եթե նման դեպքեր հաստատվեն, դրանք պետք է ստանան իրավական գնահատական: «Ուժեղ Հայաստան» քաղաքական ուժը չի ընդունում ընտրական գործընթացի խախտումները եւ չի կարող աջակցել նման գործողություններին:

**- Ընտրություններից ընդամենը մի քանի օր առաջ ի՞նչ քաղաքական պատկեր եք տեսնում: Իշխանափոխությունն արդյո՞ք հնարավոր է:**

- Իշխանափոխության հավանականությունը մեծապես կախված է ընտրողից: Կարեւոր է, թե որքանով են մեր ուղերձները հասել հանրությանը, հատկապես մարզերում եւ հեռավոր բնակավայրերում, որտեղ տեղեկատվությունը հաճախ դժվարությամբ է հասնում քաղաքացիներին: Վերջնական որոշումը, բնականաբար, կայացնելու է ժողովուրդը:

*Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

## «ՊԵՏՔ Է ՄՏԱԾԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ»



Ռուսաստանի նախկին վարչապետ Սերգեյ Ստեպաշինը հայտարարել է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պետք է առաջնորդվի ոչ թե միայն սեփական քաղաքական հեռանկարներով, այլ Հայաստանի ապագայի շահերով: «Փաշինյանը պետք է մտածի Հայաստանի ապագայի, ոչ թե միայն իր մասին»,- ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում ասել է Ստեպաշինը: Նա հրաժարվել է մեկնաբանել, թե արդյոք ռուսական ռազմական ներկայությունը պետք է պահպանվի Հայաստանում, եթե Երեւանը շարունակի քաղաքական մերձեցումը Եվրամիության հետ: «-Տեսնենք, թե ինչպես կանցնեն ընտրությունները Հայաստանում: Մենք նաեւ առաջարկել էինք Հայաստանում հանրաքվե անցկացնել՝ Եվրամիությանը միանալու կամ չմիանալու հարցով: Կտեսնենք, թե ինչ կլինի հետագայում»,- նշել է Ռուսաստանի նախկին վարչապետը:

Վերջին շրջանում Երեւանը հայտարարում է Եվրամիության հետ ինտեգրման ուղղությամբ շարժվելու մասին: 2025 թվականի մարտի 26-ին Հայաստանի Ազգային ժողովը ընդունել է օրենք, որով մեկնարկում է երկրի՝ ԵՄ անդամակցության գործընթացը:

Միեւնույն ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը բազմիցս հայտարարել է, որ Հայաստանը չի պատրաստվում դուրս գալ Եվրասիական տնտեսական միությունից (ԵԱՏՄ) եւ փորձում է հնարավորինս համատեղել ԵԱՏՄ անդամակցությունն ու եվրոպական ինտեգրումը:

Ավելի վաղ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել էր, որ ԵՄ-ին ինտեգրումը ինքնաբերաբար կբերի Հայաստանի եւ ԵԱՏՄ-ի միջեւ համագործակցության դադարեցման, ինչի հետեւանքով Երեւանը կկորցնի այն տնտեսական արտոնությունները, որոնցից օգտվել է միության անդամակցության ողջ ընթացքում:

*Ա. Վ.*

## ԵՄ-Ն ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Հայաստանում Եվրամիության դեսպան Վասիլիս Մարագոսը հայտարարել է, որ Բրյուսելը պատրաստ է աջակցել Հայաստանի արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացմանը՝ նոր շուկաների զարգացման միջոցով: Նրա խոսքերը փոխանցել է «Արմենպրես» գործակալությունը: Դիվանագետի խոսքով՝ աջակցության հնարավոր մեխանիզմները նախատեսվում է քննարկել նաեւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ: Միաժամանակ նա նշել է, որ կոնկրետ գործիքների եւ ծրագրերի վերաբերյալ մանրամասները կիրապարակվեն ավելի ուշ: Մարագոսը նաեւ ընդգծել է, որ Եվրամիությունը պատրաստ է քննարկել հայկական արտահանողների առաջարկներն ու խնդիրները՝ հետագա որոշումների ձեւավորման ընթացքում: Ավելի վաղ Ռուսաստանը ժամանակավոր սահմանափակումներ էր սահմանել Հայաստանից ներմուծվող մի շարք ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ հանքային ջրի եւ որոշ գյուղատնտեսական արտադրատեսակների մասով, հայտնում է Lenta.ru-ն:

## 50 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ՓԱԹԵԹ

Եվրոպական միությունը պատրաստում է Հայաստանին ուղղված տնտեսական աջակցության փաթեթ, որի նախնական ծավալը կկազմի 50 միլիոն եվրո: Այս մասին հայտարարել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը: Նրա խոսքով՝ որոշումը կայացվել է այն բանից հետո, երբ Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ մի շարք առեւտրային սահմանափակումներ է կիրառել: «Այսօր ես զրուցել եմ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ՝ Հայաստանի նկատմամբՌուսաստանի վերջին սահմանափակումների մասին: Սա ոչ այլ ինչ է, քան տնտեսական հարկադրանք, եւ դա անընդունելի է»,- հայտարարել է ֆոն դեր Լայենը: Եվրահանձնաժողովի նախագահի խոսքով՝ Եվրամիությունը մտադիր է օգնել Հայաստանին հաղթահարել տնտեսական դժվարությունները եւ ամրապնդել երկրի դիմակայունությունը արտաքին ճնշումների պայմաններում: Reuters-ի փոխանցմամբ՝ 50 միլիոն եվրոյի աջակցության փաթեթը նախատեսված է որպես նախնական օգնություն՝ Ռուսաստանի սահմանափակումների տնտեսական հետեւանքները մեղմելու նպատակով: Ֆոն դեր Լայենը նաեւ ընդգծել է, որ Եվրամիությունը շարունակում է աջակցել Հայաստանի ինքնիշխանությանը եւ տնտեսական կայունությանը՝ արտաքին քաղաքական ու տնտեսական ճնշումների պայմաններում:

*Ա. Վ.*

## ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԿԼԻՆԵՆ



ՀՀ-ն եւ ԱՄՆ-ն ստորագրել են «Հայաստանի Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագիրը: «Հետամուտ լինելով Երեւանում մայիսի 26-ին ձեռք բերված պայմանավորվածության կյանքի կոչմանը՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը եւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն համաձայնագիրը ստորագրել են հեռավար: Հունիսի 1-ին համաձայնագիրը ստորագրվել է ԱՄՆ պետքարտուղարի կողմիցՎաշինգտոնում, հունիսի 4-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի կողմից Երեւանում: Սա եւս մի կարեւոր քայլ է խաղաղ, անվտանգ ու բարեկեցիկ Հայաստանի եւ տարածաշրջանի ՀՀ-ԱՄՆ տեսլականի իրականացման գործում: Հաջորդիվ, Հայաստանը եւ ԱՄՆ հետեւողական կլինեն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի իրականացման՝ նպատակ ունենալով առավել սեղմ ժամկետում ապահովել տեղում ԹՐԻՓՓ-ի իրագործումը»,-նշված է ԱԳՆ հաղորդագրության մեջ:

## ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարել է, որ ՀՀ եւ ՌԴ հարաբերություններում «մտրակի եւ քաղցրավենիքի» սկզբունքի կիրառման մասին հրապարակումները չեն արտացոլում իրականությունը: Նրա խոսքով՝ նման մեկնաբանությունները խեղաթյուրում են երկու երկրների հարաբերությունների բովանդակությունը: Հայտարարությունն արվել է Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովի շրջանակում: Զախարովան ընդգծել է, որ Մոսկվան չի դիտարկում սահմանափակումների կիրառումը որպես արտաքին քաղաքականության գործիք, հատկապես այն դեպքերում, երբ դրանք իրականացվում են միջազգային հաստատված մեխանիզմներից դուրս: Նրա խոսքով՝ Ռուսաստանը սկզբունքորեն դեմ է նման մոտեցումներին ցանկացած երկրի նկատմամբ: Քննարկման առիթ էր դարձել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինի ավելի վաղ արված հայտարարությունը՝ Հայաստանից որոշ ապրանքների ներմուծման սահմանափակումների վերաբերյալ, որոնք, ըստ ռուսական կողմի, պայմանավորված են բուսասանիտարական պատճառներով: Միաժամանակ ռուսական կողմը շարունակում է ընդգծել, որ Հայաստանի արտաքին քաղաքական ընտրությունները կարող են ազդեցություն ունենալ հետագա համագործակցության ձեւաչափերի վրա:

## ՈՐ ԹԻՐԱԽՆԵՐԻՆ Է ՀԱՐՎԱԾՈՒՄ

Իրանի զինված ուժերը սահմանափակվում են ԱՄՆ-ի կողմից Իրանի տարածքի վրա հարձակումների համար օգտագործվող թիրախների դեմ պատասխան հարվածներով: Այս մասին հայտարարել է Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին: «Մեր զինված ուժերը ինքնապաշտպանության նպատակով հարվածներ են հասցնում այն թիրախներին, որոնք ԱՄՆ-ին թույլատրվել է օգտագործել քաղաքացիական նավերի վրա հարձակվելու եւ հրադադարը խախտելու համար», - գրել է նա X-ում: Արաղչին զգուշացրել է, որ Իրանի դեմ ցանկացած ագրեսիա կհանդիպի վճռական պատասխանի, եւ որ ԱՄՆ-ն ու Իսրայելը չեն կարողանա նոր պատերազմով հասնել այն բանին, ինչին նախկինում չէին կարողացել հասնել պատժամիջոցների եւ ռազմական գործողությունների միջոցով: Չորեքշաբթի երեկոյան ԱՄՆ կենտրոնական հրամանատարությունը հայտարարել է, որ հարվածել է Իրանական Քեշմ կղզում գտնվող ցամաքային վերահսկողության օբյեկտին՝ Իրանից արձակված հրթիռներն ու անօդաչու թռչող սարքերը որսալուց հետո: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ, Իրանի զինված ուժերի էլիտար ստորաբաժանում) հայտնել է Բահրեյնում ԱՄՆ ռազմածովային ուժերի հինգերորդ նավատորմի շտաբի, ինչպես նաեւ տարածաշրջանային երկրում գտնվող ԱՄՆ ավիաբազայի վրա հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարվածների մասին՝ ի պատասխան Քեշմ կղզում գտնվող ռազմական օբյեկտի վրա ԱՄՆ-ի հարվածների: Ավելի ուշ ԱՄՆ զինված ուժերը հայտնեցին, որ հաջողությամբ որսացել են մի քանի իրանական անօդաչու թռչող սարքեր, որոնք փորձում էին հարձակվել Քուվեյթում գտնվող ամերիկյան ուժերի վրա:

ԱՄՆ-ՌԴ

# ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

**ԱՄՆ վարչակազմը աշխատում է Ռուսաստանի դեմ նոր պատժամիջոցների վերաբերյալ օրինագծի վրա: Այս մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն:**



Ռուբիոյի խոսքով՝ Սպիտակ տան իրավախորհրդատուների վարչությունը միջգերատեսչական մակարդակով համագործակցում է սենատոր Լինդսի Գրեհեմի գրասենյակի հետ՝ օրինագծի մանրամասների մշակման շուրջ՝ներկայացնելով այն դրույթները, որոնք ընդունելի կլինեն վարչակազմի համար:

«Նախագահը նշել է այդ նախաձեռնությունը եւ տվել է իր համաձայնությունը»,- ասել է Ռուբիոն: Նրա խոսքով՝ներկայում շարունակվում է օրինագծի վերջնական ձեւակերպումների համաձայնեցումը: Միաժամանակ Վաշինգտոնը մտադիր է պահպանել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցային ճնշման քաղաքականությունը՝ չնայած ռուսական նավթի վաճառքի հետ կապված որոշ ժամանակավոր արտոնություններին:

Սենատոր Գրեհեմի գնահատմամբ՝ նախաձեռնությունը վայելում է «հսկայական երկկուսակցական աջակցություն» եւ Սենատում մոտ է ընդունմանը:

ԱՄՆ-ը մայիսի կեսերին երկրորդ անգամ երկարաձգել է ռուսական նավթի վաճառքի հետ կապված որոշ գործարքների թույլտվությունները: Նմանատիպ արտոնություն տրամադրվել էր նաեւ ապրիլին, իսկ առաջին անգամ մարտին:

ԱՄՆ ֆինանսների նախարարությունը այդ որոշումը բացատրել է Մերձավոր Արեւելքում իրավիճակի սրմամբ եւ համաշխարհային էներգետիկ շուկայում հնարավոր վառելիքային դեֆիցիտը կանխելու անհրաժեշտությամբ:

Վառելիքի գների աճը սկսվել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող գործողությունների ֆոնին: Տարածաշրջանային լարվածությունը հանգեցրել է նաեւ Հորմուզի նեղուցի աշխատանքի խաթարմանը, որը համարվում է նավթի եւ հեղուկացված բնական գազի մատակարարման կարեւորագույն միջազգային ուղիներից մեկը:

*Թարգմանությունը՝ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՄՏԱՀՈԳՎԱԾ Է

Ռուսաստանը մտահոգված է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ փոխադարձ հարվածներով, որոնք կարող են հանգեցնել տարածաշրջանում լայնածավալ հակամարտության վերսկսմանը: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Մարիա Զախարովան: «Իրոք, մեր տեղեկությունների համաձայն, հունիսի 2-ին Պարսից ծոցում տեղակայված ամերիկյան ուժերը հարձակվել են Իրանի Քեշմ կղզում գտնվող ռադարների եւ անօդաչու թռչող սարքերի կառավարման կենտրոնների վրա: Հարձակման է ենթարկվել նաեւ իրանական նավթատար նավը, որը փորձում էր ճեղքել ամերիկյան շրջափակումը եւ շարժվել դեպի Խարկ կղզի», - ասել է դիվանագետը: «Հունիսի 3-ի գիշերը իրանցիները պատասխանել են այս գործողություններին՝ հրթիռային հարված հասցնելով Բահրեյնում ԱՄՆ ռազմածովային ուժերի հինգերորդ նավատորմի հրամանատարական կենտրոնին, ինչպես նաեւ Քուվեյթում գտնվող Ալի ալ-Սալեմ եւ Արիֆջան ռազմական բազաներին: Բացի այդ, հարձակման է ենթարկվել Քուվեյթի միջազգային օդանավակայանի ուղեւորային տերմինալը: Քուվեյթի արտաքին գործերի նախարարության հայտարարության համաձայն, այդ հարձակումների հետեւանքով զոհվել է մեկ մարդ, մի քանիսը վիրավորվել են: Վնասվել են կարեւորագույն ենթակառուցվածքները եւ օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերը»: «Մենք խիստ մտահոգված ենք այս զարգացումով, որը կարող է հանգեցնել Պարսից ծոցում լայնածավալ ռազմաքաղաքական հակամարտության վերսկսման, որը հրահրվել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ ռազմական ագրեսիայի պատճառով», - ընդգծել է դիվանագետը: Մոսկվան կոչ է անում բոլոր կողմերին «զերծ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են էլ ավելի սրել լարվածությունը եւ խաթարել իրավիճակը լիցքաթափելու դիվանագիտական ջանքերը»: «Կարեւոր է կանխել տարածաշրջանի հետագա ներքաշումը ավերիչ պատերազմի մեջ: Մենք կտրականապես անընդունելի ենք համարում զուտ քաղաքացիական ենթակառուցվածքների վրա հարձակումները», - հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակը:

## ՆԱԽԱՐԱՐԸ ՉԻ ԲԱՑԱՌԵԼ

Լիբանանում հրադադարը ոչ միայն ապահովում է հյուսիսային Իսրայելի բնակիչների անվտանգությունը, այլեւ հնարավորություն է տալիս հաստատել երկարատեւ խաղաղություն, հայտարարել է Իսրայելի պաշտպանության նախարար Իսրայել Կացը՝ըստ The Times of Israel-ի: «Համաձայնագիրն արտացոլում է այն իրականությունը, որը մենք մինչ օրս ստեղծել ենք Լիբանանում: Իրականություն, որը կարող է հանգեցնել Լիբանանի պետության հետ խաղաղության համաձայնագրի», - ասել է նա՝ հրադադարը անվանելով «հսկայական նվաճում», ընդգծելով, որ այն ապահովում է Լիբանանի հետ սահմանին ապրող Իսրայելի քաղաքացիների անվտանգությունը: Նախկինում Իսրայելը եւ Լիբանանը, ԱՄՆ միջնորդությամբ, համաձայնել էին պահպանել հրադադարը՝ պայմանով, որ «Հեզբոլլահը» լիովին դադարեցնի բոլոր հարձակումները: Կողմերը նաեւ համաձայնել էին ստեղծել փորձարարական գոտիներ, որոնք ամբողջությամբ կվերահսկվեն Լիբանանի զինված ուժերի կողմից: «Հեզբոլլահը» պաշտոնապես չի ստանձնել այս պարտավորությունները, քանի որ չի մասնակցել բանակցային գործընթացին:



ՆԻՍՏ

# ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է

**Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի նախագահությամբ տեղի է ունեցել կոլեգիայի նիստ, որի ընթացքում ճնարկվել են 2026 թվականի հունիսի 7-ի Ազգային Ժողովի հերթական ընտրությունների ընդառաջ՝ Գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի կողմից մինչ օրս կատարված աշխատանքները:**



Աշխատանքային խմբի գործառույթներն ուղղված են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության եւ դրան նախորդող օրվա ընթացքում ընտրական գործընթացին խոչընդոտող առերեւույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումները գրանցելուն, ուսումնասիրելուն, ստուգելուն, ըստ ենթակայության ուղարկելուն եւ դրանց քննարկման նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելուն:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով՝ Գլխավոր դատախազությունում գործարկվել է թեժ գիծ՝ 010 511-527 հեռախոսահամարով: Թեժ գծի միջոցով ընտրական գործընթացում ներգրավված բոլոր անձինք եւ կազմակերպությունները, ինչպես նաեւ քաղաքացիները ընտրական գործընթացին խոչընդոտող առերեւույթ հանցագործությունների վերաբերյալ փաստական տվյալներ ունենալու դեպքում դրանք կարող են փոխանցել Գլխավոր դատախազություն կամ հաղորդումն ուղարկել Դատախազության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին կամ անանուն հաղորդում ներկայացնել azdararir.am կայքի միջոցով:

Աննա Վարդապետյանը, դիմելով դատախազներին, ընդգծել է. «Ձեզնից յուրաքանչյուրից պահանջվում է ձեր աշխատանքով հանրության մոտ ձեւավորել հստակ ընկալում, որ.

Ընտրակաշառքը հանցագործություն է, որի համար պատիժը ռեալ ազատազրկման ձեւով է, անխուսափելի ու խիստ:

Հանցագործություն է ոչ միայն ընտրակաշառք առաջարկելը կամ տալը, այլեւ ստանալը:

Հանցագործություն է քաղաքացիներին գումար, ծառայություն, նվեր, արտոնություն կամ այլ օգուտ առաջարկելը՝ նրանց ընտրության վրա ազդելու նպատակով: Հանցագործություն է ընտրության վրա ազդելու նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը: Հանցագործություն է քաղաքական հավաքների կամ ընտրական միջոցառումների մասնակցության համար մարդկանց վճարելը:

Հանցագործություն է ընտրողին նյութապես շահագրգռելը՝ անկախ նրանից, թե այն ինչ անվան տակ է ներկայացվում, օրինակ՝ բարեգործություն:

Ընտրական գործընթացի հետ կապված յուրաքանչյուր հանցագործություն անկախ ներգրավված անձանց քանակից, ընտրակաշառքի չափից, ձեւից, ընտրողների կամքի վրա ազդեցության եղանակից, դերակատարներից արժանանում է քրեաիրավական խիստ գնահատականի: Հաջորդիվ մեր աշխատանքը նույն տրամաբանությամբ պետք է շարունակվի: Եվ այս գործընթացի արդյունքը ընտրական հանցագործությունների նկատմամբ «զրո» հանրային հանդուրժողականությունը պետք է լինի»:

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախորդ օրը ինքնասպանության փորձեր են եղել Արմավիրի բանտում: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ 5-րդ տեղամասի 25 խցից օտարերկրացի մի դատապարտյալ փորձել է կախվելու միջոցով ինքնասպան լինել, սակայն քրեակատարողական հիմնարկի ծառայողներին հաջողվել է կանխել: Դատապարտյալին հանգստացրել են, որից հետո նա փորձել է սուր ածելիով վնասել ձեռքերը: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ շտապօգնություն են կանչել:

Սա միակ դեպքը չէ. 4-րդ տեղամասում եւս մեկ անձ փորձել է կախվելու միջոցով ինքնասպան լինել, ինչը ՔԿՀ ծառայողների կողմից կանխվել է: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ վերջիններս կոնկրետ պահանջեր են ներկայացնում ՔԿՀ ղեկավար կազմին, որը անթույլատրելի է համարվում, ինչից հետո գնում են ինքնավնասման:

*Ք. Մ.*

## ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄՆԵՐ

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ բնակչության կողմից շարունակվում են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնումները: Ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնումներ են գրանցվել Համայնքային ոստիկանության Արմավիրի եւ Արտաշատի բաժինների ծառայողների կողմից հետեւողականորեն անցկացվող բացատրական աշխատանքի արդյունքում: Մասնավորապես, Արմավիրի բաժնի համայնքային ոստիկանների բացատրական աշխատանքի շնորհիվ ոստիկանություն զանգած քաղաքացին զենքզինամթերք էր թողել Մրգաշատ գյուղի կամրջի տակ: Համայնքային ոստիկանները նրա նշած վայրում հայտնաբերել են «Կալաշնիկովի» 2 ինքնաձիգ, 8 հրացան, 3 նռնակ, տարբեր տեսակի 3 ատրճանակ, սվին-դանակ, տարբեր տրամաչափի ու տեսակի 808 փամփուշտ եւ այլ զինամթերք:

Արդյունավետ էր նաեւ Արտաշատի համայնքային ոստիկանների բացատրական աշխատանքը: ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացու նշած վայրում՝ Արաքսավան գյուղի վարչական տարածքում գտնվող արտեզյան ջրի կայանի մոտ, հայտնաբերվել են «Կալաշնիկովի» ինքնաձիգ, «ՌՊԿ» տեսակի գնդացիր, մեկփողանի որսորդական հրացան, «Ֆ-1» եւ «ՌԳԴ» տեսակի 2 նռնակ՝ պայթուցիչներով, պայթուցիկ սարք եւ պայթուցիչ, ինքնաձիգի փամփշտատուփ՝ լիցքավորված 30 փամփուշտով, տարբեր տեսակի 58 փամփուշտ եւ այլ զինամթերք:

Ոստիկանությունը հորդորում է ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնել՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:



ԼՈՒՐԵՐ

## ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Մայիսի 27-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի: «Ուժեղ Հայաստանը» պահանջում է պարտավորեցնել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության եւ դրա նախընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Նիկոլ Փաշինյանի նկատմամբ նախազգուշացում կիրառելուն: Հայցադիմումն ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության եւ դրա նախընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Նիկոլ Փաշինյանի նկատմամբ նախազգուշացում կիրառելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունել վարույթ: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջել ներկայացնելու 18. 05.2026 թվականի դիմում-հաղորդման եւ ի լրումն 18.05.2026 թվականի դիմում հաղորդման «դիմումի» հիման վրա հարուցված վարչական վարույթի նյութերը ողջ ծավալով:

*Ք. Մ.*

## ՉՈՐՍ ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Տելեգրամյան հավելվածում գրանցված մի խումբ քաղաքացիներ ապօրինի իրացնում են թմրամիջոցներ: Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ: Օպերատիվ-հետախուզական լայնածավալ միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում՝ Երեւանի Գոգոլի փողոցում իրացնելու նպատակով թմրանյութ տեղադրելու պահին, իրավապահները ձերբակալեցին մայրաքաղաքի բնակիչներ 32-ամյա տղամարդուն եւ 33-ամյա կնոջը: Տղամարդու վարած ավտոմեքենայով հանդերձ նրանք ներկայացվեցին նախաքննական մարմին: Երկուսին էլ առաջադրվեց մեղադրանք: Կատարված խուզարկությամբ մեքենայում հայտնաբերվեցին մեթամֆետամինի նմանվող ընդհանուր 27 գրամ զանգվածով փաթեթներ: Իրավապահների հետագա համատեղ գործողությունների արդյունքում հիմնավորվեց, որ ձերբակալված տղամարդն ու կինը մեթամֆետամինը ձեռք են բերել մայրաքաղաքի Նորաշեն թաղամասում բնակվող ամուսիններից: Նորաշենի բնակիչներ՝ 40-ամյա տղամարդն ու նրա 33-ամյա կինը, եւս ձերբակալվեցին ու ներկայացվեցին նախաքննական մարմին: Նրանց նույնպես առաջադրվել է մեղադրանք: Նախաքննությունը շարունակվում է:

*● Ըստ վիճակագրական տվյալների՝ հունիսի 3-ից 4-ը բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 9 դեպք:*

ՍԱՐՋ

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ՍԽԱԼԸ



Մայիսի 30-ին Իջեւան համայնքի Սեւքար բնակավայրում Նիկոլ Փաշինյանի ու ՔՊ-ականների նախընտրական քարոզչական հանդիպմանը քիչ մարդ է հավաքվել: Սեւքարի բանկիչները հայտնեցին, որ նախընտրական այդ հավաքի մասնակիցների սակավամարդությունը մասամբ ծածկել են ՔՊ-ի քարոզչական ավտոբուսից իջածներով: Նախընտրական հանդիպմանը քիչ մասնակից է եղել, եւ դա այն դեպքում, որ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ նրա եղբայր, ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանը արմատներով Սեւքար գյուղից են, Սեւքարը հորական կողմից նրանց պապական գյուղն է, Սեւքարում նրանց բազում բարեկամներ, Ղալումյաններ են բնակվում: Սեւքարում նախընտրական քարոզչություն անելով՝ Նիկոլ Փաշինյանը ասել է, որ այդ գյուղում հաստատվել է պետական աջակցությամբ, վարկային միջոցներով, 17 միլիոն դրամ արժեքով 197 առանձնատան կառուցում, իսկ ընդհանուր Տավուշի մարզում հաստատվել է 1931 առանձնատան շինարարություն: Ն. Փաշինյանը անդրադարձել է նաեւ իրենց կողմից ՀՀ-ում կենսաթոշակների չափի բարձրացմանը՝ հայտարարելով. «3-րդ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ միջին կենսաթոշակն ավելի բարձր ա, քան նվազագույն սպառողական զամբյուղը»:

Նրա ասածը ճիշտ չէ: Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2026թ. մարտի դրությամբ (հաջորդ տվյալները լինելու են հուլիսին) ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի գումարը եղել է 82 հազար 652,3 դրամ, 2025 թվականին միջին կենսաթոշակը եղել է 49 հազար 492 դրամ: Ն. Փաշինյանը նախկինում հայտարարում էր, որ եթե իրենք 10 հազար 400 դրամով ավելացնեն թոշակները, կենսաթոշակառուները չեն իմանա, թե ինչի վրա ծախսեն այդ գումարը: ԱԺ ընտրություններից առաջ Փաշինյանը 10 հազար դրամով ավելացրեց թոշակները: Եթե այդ 10 հազարը ավելացնենք միջին կենսաթոշակին, բոլոր դեպքում դա փոքր է լինում նվազագույն սպառողական զամբյուղի գումարից: 8 տարի վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը երեւի նվազագույն սպառողական զամբյուղը շփոթել է նվազագույն պարենային զամբյուղի հետ, որը այս տարվա մարտի դրությամբ եղել է 44 հազար 676.9 դրամ: 8 տարվա վարչապետ Նիկոլ Փաշինյանը չգիտի, թե ինչքան է նվազագույն սպառողական զամբյուղի գումարը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

ՖԻԹՆԵՍ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՍՐԱՀՆԵՐ

# ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ

**Կառավարության երեկվա որոշմամբ սահմանվել են ֆիթնես կենտրոններին եւ մարզասրահներին ներկայացվող չափորոշիչները: Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:**



Նա հիշեցրել է՝ նախորդող շրջանում «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում կատարված փոփոխությունները նպատակ ունեն խթանելու քաղաքացիների ֆիզիկական ակտիվությունն ու առողջ ապրելակերպը՝ միաժամանակ սահմանելով որոշակի չափանիշներ տվյալ գործունեության համար: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ օրենքի փոփոխությունից հետո իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, ֆիթնես կենտրոնների գործունեությունը դարձել է ծանուցման ենթակա, եւ այս տարվա փետրվարի վերջից մինչ օրս իրենց գործունեության մասին ծանուցել են շուրջ 40 կազմակերպություններ:

«Ֆիթնես ծառայություն մատուցող կազմակերպությունները գործում են գրեթե բոլոր մարզերում եւ Երեւանում եւ աշխարհագրական առումով բավականին լայն ընդգրկվածություն ունեն: Կառավարության քաղաքականությունը միտված է դրանց զարգացմանը, որպեսզի մարդիկ կարողանան մարզվել առողջ ու ակտիվ ժամանց ապահովող միջավայրում՝ բարելավելով իրենց առողջությունը: Սահմանվել է նաեւ ֆիթնես կենտրոններում աշխատող մարզիչների հավաստագրման կարգը՝ կարեւորելով քաղաքացիներին խորհրդատվություն տրամադրող եւ նրանց մարզող մասնագետների պատշաճ մասնագիտական պատրաստվածության հարցը»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու հիշեցրել՝ հավաստագրման կարգն այս տարվա մայիսի 7-ից ուժի մեջ է մտել եւ գործում է: Ըստ այդմ՝ սահմանված են հստակ ընթացակարգեր եւ մասնագիտական գիտելիքների շրջանակ, որոնք հիմք են հանդիսանում հավաստագրման համար:

«Ըստ էության՝ տվյալ որոշումը գալիս է ամբողջացնելու այս քաղաքականության շղթան՝ սահմանելով ֆիթնես կենտրոնների համար նախատեսվող չափորոշիչները: Դրանք կգործեն որոշման ընդունումից մեկ տարի անց. գործող կազմակերպությունների համար մեկ տարին բավարար ժամանակ է՝ վերլուծելու իրենց գործունեությունը եւ անհրաժեշտության դեպքում իրականացնելու համապատասխան փոփոխություններ»,- ընդգծել է Ժաննա Անդրեասյանը: Նրա խոսքով՝ չափորոշիչները մշակվել են ՀՀ օրենսդրությանը համապատասխան եւ ներառում են պահանջներ մարզասարքերի, օդափոխության, սանհանգույցների, ջրամատակարարման, լուսավորության, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում բժշկական ծառայությունների հասանելիության վերաբերյալ: Մասնավորապես՝ նախատեսվում է, որ մարզասարքերը պետք է ունենան համապատասխան սերտիֆիկատներ, ինչը կապահովի դրանց անվտանգ շահագործումը:

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ նախաձեռնությունը մանրամասն քննարկվել է ոլորտի ներկայացուցիչների հետ. մի քանի փուլով քննարկումներ են անցկացվել ավելի քան 40 կազմակերպությունների մասնակցությամբ, ոլորտի կարգավորման մի շարք առաջարկություններ ներկայացվել են հենց նրանց կողմից: Նա նաեւ նշել է, որ նախորդ տարվա ուսումնասիրության եւ 1600 հոգու շրջանում անցկացրած հարցման համաձայն՝ ֆիթնես կենտրոններ հաճախում է յուրաքանչյուր 10 քաղաքացուց 1-ը, եւ այս ցուցանիշը բարելավման անհրաժեշտություն ունի: Կառավարության քաղաքականությունը պետք է միտված լինի այդ գործունեության խթանմանը՝ կարգավորելով իրավական դաշտը: Նա հիշեցրել է՝ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարության շրջանակում մարզերում մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ նախատեսվում է տիպային մարզահամալիրների կառուցում: Առաջին փուլում դրանք նախատեսվում են Արարատում, Մարտունիում եւ Եղեգնաձորում: Արարատում եւ Մարտունիում հողահատկացումներն արդեն իրականացվել են, նախագծերը փորձաքննություն են անցել, եւ այժմ շինարարական մրցույթների փուլն է: «Այս մարզահամալիրներում նախատեսվում է նաեւ ֆիթնես կենտրոնների առկայություն՝ որպես համալիրների կարեւոր բաղադրիչ: Դրանց կառավարումը նախատեսվում է վստահել մասնավոր ընկերություններին, որոնք մասնագիտացած են այս ոլորտում: Սա նշանակում է, որ ինստիտուցիոնալ կարգավորումներին զուգահեռ մենք վարում ենք նաեւ ենթակառուցվածքների զարգացման քաղաքականություն, որը, վստահ եմ, կհանգեցնի էական դրական փոփոխությունների»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Որոշման ընդունման կարեւորությունն ընդգծել է նաեւ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը՝ նշելով, որ ոլորտում հստակ չափանիշների ներդրումը եւ դրանց պահպանման նկատմամբ վստահությունը հնարավորություն կտան ֆիթնես ծառայությունները կապել առողջապահական ապահովագրության համակարգի հետ:

«Եթե ոլորտը կարգավորված է եւ ունի թվային շտեմարաններ, որոնք արձանագրում են քաղաքացու ֆիթնես պատմությունը, ապա կարող ենք մեկնարկել նաեւ քեշբեքի ծրագիրը: Այս դեպքում ֆիզիկական ակտիվության վրա կատարված ծախսերը կարող են դիտարկվել որպես առողջապահական ապահովագրության շրջանակում կատարված ծախսեր, եւ քաղաքացիները կկարողանան օգտվել համապատասխան հետվճարի մեխանիզմներից»,- նշել է փոխվարչապետը:

Միհեր Գրիգորյանի խոսքով՝ դրա համար անհրաժեշտ է ապահովել ծառայությունների էլեկտրոնային գրանցում եւ տվյալների փոխանակում «Արմեդ» համակարգի հետ, ինչը թույլ կտա գործարկել հետվճարի մեխանիզմները:

«Սինխրոնիզացիան չափազանց կարեւոր է. մարդը պետք է գիտակցի, որ իր յուրաքանչյուր քայլը, որն ուղղված է սեփական առողջության ամրապնդմանը, միաժամանակ նպաստում է նաեւ հանրային առողջության եւ հանրային վարքականոնի ձեւավորմանը: Այդ ներդրումը պետք է ճանաչվի եւ գնահատվի պետության կողմից՝ համապատասխան համակարգերի միջոցով»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարը նաեւ նշել է՝ թվայնացման օրակարգում ներառված է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումը, որի մի բաղադրիչն արդեն գործարկվել է, մյուս բաղադրիչները մշակվում են եւ առաջիկայում կքննարկվի Թվայնացման խորհրդում:

## ՀՀ-ԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ

Պետշահերի պաշտպանության շրջանակում՝ ՀՀ-ին վերադարձվեց Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող 2 անշարժ գույք: Այս մասին հայտնում են ՀՀ գլխավոր դատախազությունից: Գլխավոր դատախազությունը տեղեկացրել էր, որ Պետական շահերի պաշտպանության վարչությունը 2026 թվականի հունվարի 23-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել «Սեյսմակայուն շինարարության եւ կառուցվածքների պահպանման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ԲԲ ընկերության եւ «Ջերմուկ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի միջեւ 2008 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը եւ կիրառել անվավերության հետեւանքներ: Դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 14-ի վճռով, հաստատվել էր կողմերի հաշտության համաձայնությունը: Օրինական ուժի մեջ մտած հաշտության համաձայնությամբ, 2026 թվականի հունիսի 6-ին Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աղայան փողոցի 7-րդ շենքի 51,9 քմ ընդհանուր մակերեսով թիվ 97 նկուղային տարածքի եւ 0,08 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

● *Անցած 1 օրում գրանցվել է 11 ավտովթար.1 մարդ զոհվել է, 11-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

## ԼՈՒՅՍԵՐԻ ՏԱՃԱՐԸ

«Ջվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանը գեղարվեստական լուսավորության նոր համակարգ ունի: Նախօրեին «Լույսերի տաճարը» խորագրով մշակութային միջոցառման ընթացքում վառվել են տաճարի նոր լույսերը՝ միավորելով պատմության եւ մշակույթի բացառիկ կոթողի անցյալի ու ներկայի խորհրդանշական սահմանները: Լույսերի վառման հանդիսավոր արարողությանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, բազմաթիվ հյուրեր: Ջվարթնոց տաճարի լուսավորության նախագծի շուրջ մասնագետներն աշխատել են մոտ երեք տարի: Նախագիծն իրականացրել է ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը. ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 26 մլն 205 հազար դրամ (19 մլն 800 հազար դրամ՝ պետական բյուջեից, 6 մլն 405 հազար դրամ՝ ՊՈԱԿ-ի արտաբյուջեից): Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայության տնօրեն Արմեն Հովհաննիսյանը նշել է, որ «Ջվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում վերջին երեք տարիներին պետական միջոցներով մոտ 170 միլիոն դրամի ներդրում է իրականացվել. ամբողջությամբ փոխվել են սալահատակը, ոռոգման համակարգը, վերականգնվել է հնձանը, նորոգվել է Ջվարթնոցի թանգարանի շենքի տանիքը, իրականացվել է լուսավորության նախագիծը, նախատեսվում են նաեւ այլ աշխատանքներ: Նրա խոսքով՝ կատարված աշխատանքները միտված են հուշարձանի պահպանմանը եւ հանրահռչակմանը. 2026 թվականի առաջին կիսամյակում, 2025-ի առաջին կիսամյակի հետ համեմատ, մոտ 15%-ով ավելացել է այցելուների թիվը: Միջոցառման ընթացքում լուսային նորարարական լուծումների, ինստալացիաների եւ անիմացիայի համադրմամբ ներկայացվել է Ջվարթնոց տաճարի հարուստ պատմությունը: Տեղի է ունեցել նաեւ համերգ. հնչել է ջազ երաժշտություն:

## ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՂԹԱՆԱԿ

Ֆուտբոլի աշխարհի 2026 թվականի առաջնությանը (ԱԱ-2026) ընդառաջ՝ կայացել են մի քանի ուշագրավ ընկերական հանդիպումներ: Ռոտերդամի «Ֆեյենորդ» մարզադաշտում Նիդերլանդների ազգային հավաքականը հյուրընկալել էր Ալժիրին: Հանդիպումն ավարտվեց աֆրիկյան թիմի անակնկալ հաղթանակով՝ 1:0: Խաղի միակ եւ հաղթական գնդակը հանդիպման վերջնամասում՝ 86-րդ րոպեին, հեղինակեց Ալժիրի հավաքականի կիսապաշտպան Անիս Հաջ Մուսան: Հիշեցնենք, որ երկու հավաքականներն էլ մասնակցելու են ԱՄՆ-ում, Կանադայում եւ Մեքսիկայում կայանալիք աշխարհի առաջնությանը: Նիդերլանդները հանդես կգա F խմբում՝ մրցելով Ճապոնիայի, Շվեդիայի եւ Թունիսի հետ, իսկ Ալժիրը J խմբում ուժերը կչափի Արգենտինայի, Հորդանանի եւ Ավստրիայի հետ:

ԱՄԲԵՐ

Գ.

# ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ Է ԹՈՂԱՐԿՈՒՄ

**Ամբեր Կապիտալի կողմից կառավարվող եւ արեւային էլեկտրակայանների պորտֆելը միավորող հոլդինգային ընկերությունը՝ «Սոլիս» ՓԲԸ-ն, մեկնարկում է դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխումը՝ 2 մլն ԱՄՆ դոլար անվանական ծավալով (ընդհանուր 20,000 հատ պարտատոմս):**




Պարտատոմսերի տեղաբաշխողն է Ամերիաբանկը: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100 ԱՄՆ դոլար է, արժեկտրոնային տարեկան տոկոսադրույքը՝ 8% (եռամսյակային վճարման պարբերականությամբ), ձեռքբերման նվազագույն քանակը՝ 5 հատ, շրջանառության ժամկետը՝ 48 ամիս: Պարտատոմսերի տեղաբաշխումը մեկնարկելու է 2026թ. հունիսի 4-ին եւ ավարտվելու է 2026թ. հուլիսի 30-ին (կամ ավելի վաղ, եթե ամբողջ ծավալը շուտ վաճառվի):

«Սոլիս»-ի միակ բաժնետերը եւ վերջնական վերահսկողը «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն» է, որը Հայաստանի առաջին ինստիտուցիոնալ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդն է եւ կառավարվում է Ամբեր Կապիտալի կողմից: «Սոլիս» ՓԲԸ-ն վերականգնվող էներգետիկայի ոլորտի առաջատար հարթակներից է, որի թվով ութ արեւային էլեկտրակայանները տեղակայված են Հայաստանի տարբեր մարզերում: Աշխարհագրորեն հավասարակշռված պորտֆելը նպաստում է երկրի տարբեր հատվածներում կայուն եւ մաքուր էլեկտրաէներգիայի արտադրությանը:

Ընկերությունը տիրապետում է Հայաստանում գործող խոշորագույն արեւային էներգետիկ պորտֆելներից մեկին՝ ընդհանուր 34 ՄՎտ անվանական (դրվածքային) հզորությամբ, որի շնորհիվ տարեկան արտադրվում է 64 ԳՎտժ էլեկտրաէներգիա: Սա բավարարում է ավելի քան 23,500 տնային տնտեսությունների էլեկտրաէներգիայի պահանջարկը: Արեւային էլեկտրակայանների շահագործման արդյունքում հնարավոր է կրճատել տարեկան մոտ 27,750 տոննա $CO_2$ արտանետում: Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցներն ընկերությունն ուղղելու է վարկերի վերաֆինանսավորմանը, կապիտալ ծախսերին եւ գործունեության ընդլայնմանը:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել առցանց՝ Ամերիաբանկի MyAmeria հավելվածի MyInvest ներդրումային հարթակի միջոցով, կամ այցելելով Ամերիաբանկի որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը, կամ ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւն Ամերիաբանկի էլ. հասցեին՝ capitalmarkets@ameriabank.am:

Առաջնային տեղաբաշխումից հետո ընկերությունը դիմելու է Հայաստանի ֆոնդային բորսա պարտատոմսերը ցուցակելու նպատակով, ինչից հետո հնարավոր կլինի դրանք գնել կամ վաճառել երկրորդային շուկայում:

«Սոլիս» ՓԲԸ պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2026թ. մայիսի 20-ի թիվ 1/219 Ա որոշմամբ:

Պարտատոմսերի ձեռքբերման կարգին, ազդագրի էլեկտրոնային տարբերակին եւ պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարությանը կարելի է ծանոթանալ այստեղ: Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ազդագրում:

*«Սոլիս» ՓԲԸ*

«Սոլիս» ընկերության գործող պորտֆելը նպաստում է Հայաստանի էներգետիկ անկախությանն ու դիվերսիֆիկացիային՝ զարգացնելով վերականգնվող էներգիայի տեղական արտադրությունը: Ժամանակակից տեխնոլոգիաների եւ առաջադեմ սարքավորումների շնորհիվ «Սոլիս» ընկերությունների խմբի արեւային կայաններն ապահովում են արդյունավետ, հուսալի եւ էկոլոգիապես մաքուր էներգիայի արտադրություն:

## ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽՎԵԼ ԵՆ

Գ.

**Երբ խոշոր բիզնեսը վայելում է ներդրողների անվերապահ վստահությունը, դրանից առաջին հերթին շահում է երկրի տնտեսությունն ու քաղաքացին: Ավելի քան 24 տարվա պատմություն ունեցող եւ շուրջ 1 միլիոն քմ բարձրակարգ կառուցապատում իրականացրած «Ռենշին» քաղաքաշինական-ներդրումային ընկերությունն ամփոփել է իր առաջին անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները. դրամային եւ դոլարային բոլոր 3 սերիաներն ամբողջությամբ իրականացվել են:**




«Ամերիաբանկի» միջոցով իրականացված տեղաբաշխման ընդհանուր ծրագրային ծավալը կազմել է 10 միլիարդ ՀՀ դրամ: Սա ոչ միայն բացառիկ ֆինանսական ցուցանիշ է քաղաքաշինության ոլորտում, այլեւ ապացույց, որ ընկերությունն իր գործունեությամբ նպաստում է տնտեսության ընդհանուր կայունությանը՝ հաշվի առնելով հանրային լայն շահը: «Նման գործիքների կիրառումը նպաստում է կապիտալի շուկայի եւ իրական սեկտորի միջեւ ինստիտուցիոնալ կապի ամրապնդմանը, որտեղ ներդրումային ռեսուրսներն ուղղվում են իրական ակտիվների ստեղծմանը եւ երկարաժամկետ տնտեսական արժեքի ձեւավորմանը, - նշում է «Ռենշին» ընկերության ֆինանսական տնօրեն Քրիստինե Չիչյանը: - Որպես ոլորտի առաջատար՝ մենք կարեւորում ենք երկրում այլընտրանքային ֆինանսական էկոհամակարգի զարգացումը: Տեղական կապիտալի շուկան դառնում է ավելի հասուն, եւ «Ռենշինը» հպարտ է այս էկոհամակարգի առաջամարտիկներից լինելու համար»:

Հանրության համար ամենակարեւորն այն է, որ այս պարտատոմսերով ներգրավված միջոցներն ունեն կոնկրետ հասցե: Դրանք չեն մնում զուտ ֆինանսական հաշվետվություններում, այլ ուղղվում են մեր քաղաքի դեմքը փոխող մեգանախագծերին:

«Մեր համար ոչ այնքան զարմանալի, որքան հաճելի է այն, որ բոլոր սերիաներն ամբողջությամբ իրացվել են՝ ընդամենը մի քանի ամսում: Սա վկայում է անվերապահ վստահության մասին եւ հնարավորություն է տալիս մեզ ավելի մեծ եւ համարձակ նախագծեր իրականցնել, - ընդգծում է Քրիստինե Չիչյանը: - Այս հաջողությունը համատեղ աշխատանքի արդյունք է: Շնորհակալություն ենք հայտնում ֆինանսական գործընկերներին եւ, ամենակարեւորը, մեր ներդրողներին՝ այս պատմական փուլը մեզ հետ կիսելու համար»:

«Ռենշինից» նաեւ տեղեկացանք, որ տեղաբաշխման հաջող ավարտից հետո «Ռենշին»-ը դիմելու է Հայաստանի ֆոնդային բորսա՝ պարտատոմսերը ցուցակելու նպատակով: Սա կրկին ընդգծում է ընկերության թափանցիկությունն ու պատրաստակամությունը՝ մշտապես մնալու բաց եւ հաշվետու հասարակության ու իր ներդրողների առջեւ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՌԵԿՈՐԴ

# ՄԱՅՔԼ ՋԵՔՍՈՆԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է ԿԵՐՏՈՒՄ

**Փոփ երաժշտության արքա Մայքլ Ջեքսոնը հերթական անգամ պատմություն է կերտել երաժշտական աշխարհում: Նրա «Chicago» երգը դեբյուտ է կատարել Billboard Hot 100 հիթ-շքերթի 30-րդ հորիզոնականում՝ դառնալով Ջեքսոնի 52-րդ սոլո մուտքը հեղինակավոր աղյուսակում:**



Այս հաջողության շնորհիվ Ջեքսոնը դարձել է առաջին եւ առայժմ միակ արտիստը, որը Billboard Hot 100-ում ունեցել է նոր մուտքեր 1970-ականներից սկսած յուրաքանչյուր տասնամյակում: Նրա կարիերան ընդգրկում է վեց տասնամյակ՝ 11 երգ 1970-ականներին, 20-ը՝ 1980-ականներին, 12-ը՝ 1990-ականներին, 4-ը՝ 2000-ականներին, 4-ը՝ 2010-ականներին եւ այժմ մեկ նոր մուտք՝ 2020-ականներին: «Chicago»-ն սկզբնապես թողարկվել էր 2014 թվականին՝ Ջեքսոնի մահից հինգ տարի անց հրապարակված «Xscape» ալբոմում: Երգը, որը ստեղծվել է Timbaland-ի եւ JRoð-ի պրոդյուսերությամբ, իսկ հեղինակն է Cory Rooney-ն, սկզբնական թողարկման ժամանակ չէր համարվում Ջեքսոնի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը:

Սակայն վերջին ամիսներին «Chicago»-ն նոր կյանք է ստացել սոցիալական ցանցերի շնորհիվ: Հատկապես TikTok-ում երգի լայն տարածումը, ինչպես նաեւ Մայքլ Ջեքսոնի ստեղծագործությունների նկատմամբ աճած հետաքրքրությունը՝ «Michael» կենսագրական ֆիլմի մեծ հաջողությունից հետո, զգալիորեն մեծացրել են երգի լսումները: Luminate-ի տվյալներով՝ մայիսի 22-28-ը ներառող հաշվետու շաբաթվա ընթացքում երգը ԱՄՆ-ում գրանցել է 10.7 միլիոն պաշտոնական առցանց լսում, ինչը 30 տոկոսով գերազանցում է նախորդ շաբաթվա ցուցանիշը: Billboard-ի կանոնների համաձայն՝ հին երգերը կարող են վերադառնալ Hot 100, եթե հայտնվեն լավագույն 50-ում եւ ցուցաբերեն սպառման զգալի աճ: Ամբողջ աշխարհում «Chicago»-ն արդեն հավաքել է շուրջ 388 միլիոն հոսքային լսում: Billboard-ը նշում է, որ երգի լսումների քանակը կայուն աճել է վերջին շաբաթների ընթացքում մայիսի սկզբի 3.8 միլիոնից հասնելով ավելի քան 8.3 միլիոնի մայիսի վերջին:

Ներկայումս «Chicago»-ն Ջեքսոնի երկրորդ ամենաբարձր հորիզոնական զբաղեցնող երգն է Billboard Hot 100-ի ընթացիկ աղյուսակում՝ զիջելով միայն «Billie Jean»-ին, որը գտնվում է 19-րդ հորիզոնականում: «Chicago»-ից հետո տեղ են գտել նաեւ «Human Nature»-ը (31-րդ հորիզոնական) եւ «Don't Stop`Til You Get Enough»-ը (43-րդ հորիզոնական):

Հիշեցնենք, որ մայիսի 23-ի Billboard Hot 100 աղյուսակում Մայքլ Ջեքսոնը եւս մեկ կարեւոր նվաճում էր գրանցել. միաժամանակ վեց երգ էր հայտնվել հիթ-շքերթում՝ «Billie Jean», «Human Nature», «Beat It», «Don't Stop` Til You Get Enough», «Dirty Diana» եւ «Rock with You»: Այդ երգերից բոլորն էլ իրենց ժամանակին հասել էին լավագույն տասնյակ, իսկ հինգը՝ նույնիսկ առաջին հորիզոնական:

Ավելի քան 15 տարի անց իր մահվանից հետո Մայքլ Ջեքսոնը շարունակում է պահպանել իր բացառիկ ազդեցությունը համաշխարհային երաժշտության վրա՝ ապացուցելով, որ իր ստեղծագործությունները շարունակում են գտնել նոր լսարան եւ հաղթահարել ժամանակի սահմանները:

ՏԱՐԵԴԱՐՁ

**Հունիսի 4-ին ծննդյան տարեդարձն է նշում ամերիկացի հայտնի դերասանուհի, ռեժիսոր, պրոդյուսեր եւ հասարակական գործիչ Անջելինա Ջոլին: Նա համարվում է ժամանակակից կինոյի ամենահայտնի եւ ազդեցիկ դեմքերից մեկը, որի գործունեությունը վաղուց դուրս է եկել Հոլիվուդի շրջանակներից:**



Անջելինա Ջոլին ծնվել է 1975 թվականի հունիսի 4-ին Լոս Անջելեսում՝ դերասան Ջոն Վոյթի ընտանիքում: Դերասանական կարիերան սկսել է երիտասարդ տարիքում, սակայն լայն ճանաչում է ձեռք բերել 1990-ականների վերջին: 1999 թվականին «Girl, Interrupted» ֆիլմում իր դերակատարման համար նա արժանացել է «Օսկար» մրցանակի՝ որպես երկրորդ պլանի լավագույն դերասանուհի:

Հետագա տարիներին Ջոլին նկարահանվել է մի շարք հաջողված ֆիլմերում, որոնց թվում են «Lara Croft: Tomb Raider», «Mr. & Mrs. Smith», «Wanted», «Salt», «Maleficent» եւ այլ կինոնկարներ: Նրա մարմնավորած կերպարները նրան դարձրել են համաշխարհային կինոարդյունաբերության ամենապահանջված դերասանուհիներից մեկը:

Բացի դերասանական աշխատանքից, Ջոլին զբաղվել է նաեւ ռեժիսուրայով: Նրա նկարահանած ֆիլմերը հիմնականում անդրադառնում են պատերազմի, մարդկային ճակատագրերի եւ մարդու իրավունքների թեմաներին: Նա նաեւ ակտիվորեն ներգրավված է բարեգործական եւ մարդասիրական նախաձեռնություններում:

Ավելի քան երկու տասնամյակ Անջելինա Ջոլին աշխատել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ՝ այցելելով աշխարհի տարբեր թեժ կետեր եւ աջակցելով փախստականներին ու պատերազմներից տուժած մարդկանց: Նրա մարդասիրական գործունեությունը միջազգային բազմաթիվ գնահատականների է արժանացել:

2013 թվականին Ջոլին համաշխարհային ուշադրության կենտրոնում հայտնվեց նաեւ այն բանից հետո, երբ հրապարակավ պատմեց առողջական խնդիրների եւ կանխարգելիչ վիրահատության մասին՝ նպաստելով քաղցկեղի վաղ ախտորոշման եւ առողջապահական իրազեկվածության թեմաների քննարկմանը:

Տարիների ընթացքում Անջելինա Ջոլին դարձել է ոչ միայն հաջողակ դերասանուհի, այլեւ ազդեցիկ հասարակական գործիչ օրինակ: Նրա անունը շարունակում է կապվել կինոյի, բարեգործության եւ մարդու իրավունքների պաշտպանության հետ, իսկ նրա գործունեությունն ու ձեռքբերումները նրան դարձրել են աշխարհի ամենահայտնի կանանցից մեկը:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ ՀԱՐՍԱՆԻՔԻՆ



Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագ, Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանն օրերս Երեւանում մասնակցել է Հայաստանի ընտրանու նախկին ֆուտբոլիստ Արտյոմ Սիմոնյանի եւ նրա ընտրյալի՝ Լիլիթի հարսանեկան արարողությանը: Երեւանյան խնջույքը համախմբել է հայկական ֆուտբոլային աշխարհի բազմաթիվ հայտնի դեմքերի, որոնց թվում էր նաեւ Մխիթարյանը: Միջոցառումից ուշագրավ տեսանյութ է հրապարակել Երեւանի «Փյունիկի» ռուս պաշտպան Միխայիլ Կովալենկոն՝ իր տիկտոկյան էջում: Կադրերում երեւում է, թե ինչպես են ֆուտբոլիստները ջերմ զրույցի բռնվում ռեստորանում. Մխիթարյանը հետաքրքրվում է, թե ինչպես է Կովալենկոն իրեն զգում Հայաստանում եւ հաջողություն է մաղթում նրան: Նշենք, որ Արտյոմ Սիմոնյանն իր կարիերայի ընթացքում պաշտպանել է հայկական եւ ռուսական մի շարք ակումբների գույները, իսկ ներկայումս հանդես է գալիս Ռուսաստանի Առաջին լիգան ներկայացնող Վոլգոգրադի «Ռոտորի» կազմում:

## ԸՍՏ ԱՄԵՆԱՅՆԻ՝ ԸՆԴՈՒՆԵԼ Է

Հայաստանի ազգային հավաքականի եւ «Կրասնոդարի» ավագ ու կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի՝ Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ-Ահլի» հնարավոր տեղափոխության վերաբերյալ նոր մեկնաբանությամբ է հանդես եկել ֆուտբոլային գործակալ Թիմուր Գուրցկայան: «Վերջին տեղեկություններից պարզ է դառնում, որ «Կրասնոդարը» դեմ չէ, որպեսզի Էդիկը բանակցի անձնական պայմանների շուրջ: Մենք թվերին չենք տիրապետում, բայց, ըստ ամենայնի, «Կրասնոդարն» ընդունել է «Ալ-Ահլի» առաջարկը»,- նշել է գործակալը Fonbet YouTube-յան ալիքի եթերում:

Հիշեցնենք, որ 2025/2026 մրցաշրջանում 25-ամյա ֆուտբոլիստը «ցուլերի» կազմում անցկացրել է ընդհանուր առմամբ 42 հանդիպում՝ դառնալով 14 գոլի եւ 18 արդյունավետ փոխանցման հեղինակ: Transfermarkt պորտալը հայ կիսապաշտպանի տրանսֆերային արժեքը ներկայումս գնահատում է 25 միլիոն եվրո:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 13-ին՝ ժամը 16:00-ին, կկայանա «Անխելք մարդը» ներկայացումը:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ*

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ի՞նչ ժամկետներում է լիազոր մարմինը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարում:**

*Հեղինե Աբրահամյան, 43 տարեկան*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տնօրենի թափուր տեղի մրցույթն անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի N 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության, տնօրենի նշանակման եւ բողոքարկման, փորձաշրջանի սահմանման» կարգի պահանջների:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կամ մարզպետի աշխատակազմի կամ Երեւանի քաղաքապետարանի (լիազոր մարմին) համապատասխան ստորաբաժանումը, ըստ ենթակայության, տվյալ հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, առավելագույնը 45 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 40 աշխատանքային օր առաջ հայտարարում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ, որը բաղկացած է 3 փուլից՝ հավակնորդների հայտերի ընդունում, զարգացման ծրագրի փորձաքննություն եւ հարցազրույցի անցկացում:

*ՀՀ ԿԳՄՍ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Որո՞նք են դրամի վճարունակության հատկանիշները:**

*Գագիկ Ասատրյան, 66 տարեկան*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** ՀՀ թղթադրամները եւ մետաղադրամները համարվում են վճարունակ, եթե համապատասխանում են Կենտրոնական բանկի սահմանած նկարագրությանը եւ վճարունակության հատկանիշներին: Թղթադրամները համարվում են վճարունակ եւ փոխանակվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից, որոնք.

աննշան չափով ծակոտված են, պատռված, մաշված կամ կրում են աննշան բծեր եւ գրառումներ,

որոնց վրա կա աննշան քանակությամբ ներկ, բայց թղթադրամի հիմնական պատկերները եւ պաշտպանիչ հատկանիշները չեն ծածկված,

կամ աննշան չափով այրված են, բայց թղթադրամի ամբողջականությունը պահպանվել է:

*ՀՀ ՊԵԿ*

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի*




Համաճարակի վտանգ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում. բազմաբնակարանային շենքերի բակերն ու երեխաների խաղահրապարակը լցված են կեղտաջրով, ու գարշահոտ է տարածվել:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել




**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ________________
Ազգանուն՝ ________________
Առաքման հասցե՝ ________________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________________

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



| | | |
|---|---|---|
| Շիրակ | + 3 + 7 | + 19 + 24 |
| Կոտայքի լեռներ | + 3 + 6 | + 19 + 22 |
| Կոտայքի նախալեռներ | + 10 + 13 | + 23 + 26 |
| Գեղարքունիք | + 4 + 7 | + 18 + 22 |
| Լոռի | + 5 + 9 | + 21 + 25 |
| Տավուշ | + 6 + 9 | + 22 + 25 |
| Արագածոտնի լեռներ | + 3 + 6 | + 18 + 22 |
| Արագածոտնի նախալեռներ | + 9 + 13 | + 24 + 28 |
| Արարատ | + 11 + 13 | + 26 + 29 |
| Արմավիր | + 12 + 14 | + 28 + 31 |
| Վայոց ձորի լեռներ | + 4 + 7 | + 20 + 23 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 11 + 15 | + 27 + 30 |
| Սյունիքի լեռներ | + 4 + 8 | + 13 + 16 |
| Սյունիքի նախալեռներ | + 6 + 10 | + 18 + 22 |
| Սյունիքի հովիտներ | + 12 + 16 | + 26 + 29 |
| Երեւան | + 13 + 15 | + 28 + 30 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **04.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*